ARMENIAN MARKETING ASSOCIATION

The Ministry of economy of the Republic of Armenia

Հարգելի գործարարներ

Մարքեթինգի Հայկական Ասոցիացիան 2019 թ.-ի օգոստոսի 21-ին Էկոնոմիկայի նախարարության հետ կնքել է «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների կազմակերպման» մասին պայմանագիր, որը ուղղված է արտահանման խթանմանը և գործարարներին աջակցության ցուցաբերմանը՝ իրենց արտադրանքը արտերկրում ներկայացնելու և արտահանման հնարավորություն ստեղծելու կամ ընդլայնելու նպատակով:

Էկոնոմիկայի նախարարությունը նախանշել է մինչև 15 կազմակերպությունների մասնակցության աջակցումը 2020 թ.-ի մարտի 10-13 ընկած ժամանակահատվածում Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում կայանալիք խոշորագույն «MOSSHOES» ցուցահանդեսին: Նախատեսվում է, որ ՀՀ-ը տվյալ ցուցահանդեսին ներկայանալու է միասնական տաղավարով, որտեղ կազմակերպությունները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց ապրանքները:

Սույն նամակով հրավիրում ենք բոլոր շահագրգիռ ընկերություններին, որոնք արտադրում են կոշիկ, կաշի և կաշվե իրեր, և ցանկություն ունեն մասնակցելու «MOSSHOES» ցուցահանդեսին, լրացնել ու Ասոցիացիային ներկայացնել մասնակցության հայտ:

Նախնական դիմումների հավաքագրման փուլի ավարտին, Մարքեթինգի Հայկական Ասոցիացիան կհրավիրի բոլոր հետաքրքրված կազմակերպություններին ավելի մանրամասն քննարկելու աջակցության ձևաչափը, ինչպես նաև այլ տեխնիկական հարցեր:

Հետաքրքրված կազմակերպություններին խնդրում ենք լրացնել սույն նամակին կից ներկայացվող կարճ հարցաշարը, և մինչև նոյեմբերի 15-ը ուղարկել այն info@armenianmarketing.com էլ. հասցեով և զանգահարել 055 076607 հեռախոսահամարին՝ ստացումը հաստատելու նպատակով:

Ցանկացած այլ հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել 010 540719 համարով:

Հարգանքով՝

Արամ Նավասարդյան, նախագահ
Մարքեթինգի Հայկական Ասոցիացիա

+374 10 54 07 19, 010 58 16 98
info@armenianmarketing.com
fb.com/armenianmarketing
armenianmarketing.com
Armenia, Yerevan, 0019
2 Baghramyan ave., 28